

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Երևան, 25-ը մայիսի, 2009 թ.

ՊԳԿ-ի կողմից իրականացվող «Աջակցություն թունաքիմիկատների որակի վերահսկողությանը և մնացորդային քանակների մոնիտորինգին Հայաստանում» ծրագիրը մեկնարկել է

Հունաստանի կառավարության հետ նախնական քննարկումների և 2007 թ. նոյեմբերին ՊԳԿ-ի բույսերի պաշտպանության ծառայության թունաքիմիկատների վերահսկողության միջոցառումների (թունաքիմիկատների որակի վերահսկողությունը որպես «Ելակետային» միջոցառում և թունաքիմիկատների մնացորդային քանակի մոնիտորինգը որպես Հայաստանում գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի կիրառման հաստատում) իրադրությունն ուսումնասիրող առաքելության ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել և Երևանում ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցվել է *GCP/ARM/003/GRE ծրագիրը՝ «Աջակցություն թունաքիմիկատների որակի վերահսկողությանը և մնացորդային քանակների մոնիտորինգին Հայաստանում»*: Ծրագիրն իր ավանդը կբերի հանրային առողջապահության պահպանմանը և սպառողների համար սննդի անվտանգության և որակի ապահովմանը:

Ծրագրի միջնաժամկետ նպատակն է՝ երկիրն ի զորու դարձնել վերահսկելու շուկայում առկա թունաքիմիկատների որակը ըստ միջազգային չափորոշիչների և իրականացնել թունաքիմիկատների մնացորդային քանակների վերահսկման մոնիտորինգային ծրագրեր՝ գյուղատնտեսական արտադրանքի որակի բարելավման նպատակով:

Ծրագիրը պաշտոնապես հաստատվել է Հունաստանի կառավարության կողմից 2009 թ. փետրվարին՝ 2 000 000 ԱՄՆ դոլար բյուջեով, և կիրականացվի ՊԳԿ-ի և ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից երեք տարվա ընթացքում:

Անմիջական նպատակները ներառում են՝

- թունաքիմիկատների պատրաստուկների վերահսկողության ազգային լաբորատորիայի (այսպես կոչված «Թունաբանական լաբորատորիա») վերազինում՝ միջազգային բնութագրերի և չափանիշների համապատասխան թունաքիմիկատների անալիզներ կատարելու նպատակով,
- աջակցություն անասնաբուժական և պարենային լաբորատորիային՝ հզորացնելու ներպետական ինստիտուցիոնալ կարողությունները՝ ձեռնարկելու պարենի և անասնակերերի մեջ թունաքիմիկատների մնացորդային քանակների վերահսկման մոնիտորինգային ծրագրեր,
- լաբորատորիաների կառավարման միջազգայնորեն ճանաչված համակարգերի ներդրում երկու լաբորատորիաների համար, ինչը կհանգեցնի ISO/IEC 17025 հավաստագրման,
- թունաքիմիկատներին առնչվող խնդիրների մասին իրազեկվածության բարձրացում և գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի կատարելագործում:

Ծրագրի ընթացքում կիրականացվեն մի շարք ուսուցման միջոցառումներ, որոնց կաջակցեն տարբեր ոլորտների փորձագետներ, օրինակ, լաբորատորիաների նախագծման, թունաքիմիկատների որակի վերահսկողության կամ մնացորդային քանակների մոնիտորինգի: Ծրագրում ընդգրկված երկու լաբորատորիաները կստանան անալիզների ժամանակակից սարքավորումներ և կհամապատասխանեցվեն միջազգային չափորոշիչներին: Բացի «արտադրությունից չկտրված» վերապատրաստումից, կկազմակերպվեն նաև գործնական պարապմունքներ շահակիցների մասնակցությամբ,

ինչպես նաև ուսուցողական ուղևորություն՝ այլ երկրներում թունաքիմիկատների վերահսկողության միջոցառումների փորձին ծանոթանալու նպատակով: Ծրագրի աշխատանքների կարևոր մասը կկազմեն նաև հետադարձ կապը և արդյունքների վերաձևակերպումը որպես հանձնարարականներ (առաջարկներ) երկրում գործող գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների համար:

Ներկայումս ծրագրի սկզբնական առաքելությունը ղեկավարում է Հռոմում ՊԳԿ-ի կենտրոնակայանի թունաքիմիկատների կառավարման հարցերով համակարգող տիկին Յոնգ ժեն Յանգը: Առաքելության անդամներն են ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի փորձագիտական օժանդակության ծրագրերի համակարգող պրն Նեջադ Աջանովիչը և փորձագիտական հարցերով խորհրդատու պրն Կլաուս Զիլերը: Ծրագրի իրականացման աշխատանքային ծրագիրը քննարկվում է ՀՀ կառավարության պաշտոնատար անձանց հետ: